

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

« 26 » ապրիլ 2023թ. No 2104 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԻՆԴ-ՍՎԻՖՏ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, ԶԱՎԱՀԱՐՊՈՒՐ ԳՅՈՒՂ, ՏԵՀՍԻԼ ԴԵՐԱ ԲԱԶԻ, Ս.Ա.Ա. ՆԱԳԱՐ (ՄՈՂԱԼԻ) ՇՐՋԱՆ, ՓՈՒՆՋԱԲ, ԻՆ-140507 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԻՆԴ-ՍՎԻՖՏ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, ԶԱՎԱՀԱՐՊՈՒՐ ԳՅՈՒՂ, ՏԵՀՍԻԼ ԴԵՐԱ ԲԱԶԻ, Ս.Ա.Ա. ՆԱԳԱՐ (ՄՈՂԱԼԻ) ՇՐՋԱՆ, ՓՈՒՆՋԱԲ, ԻՆ-140507, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ԷՁՕ 40 ԷՋՕՄԵՊՐԱԶՈԼ (ԷՋՕՄԵՊՐԱԶՈԼ ՄԱԳՆԵԶԻՈՒՄ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԱՂԵԼՈՒՅԾ 40ՄԳ; (30/3X10/) ԲԼԻՍԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի, 27-րդ մասի 1-ին և 7-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 01/1202-23 առ 17.04.2023թ. բացասական եզրակացությունը՝ Հնդկաստանի Ինդ-Սվիֆտ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, Զավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերա Բազի, Ս.Ա.Ա. Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ, ԻՆ-140507 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ինդ-Սվիֆտ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, Զավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերա Բազի, Ս.Ա.Ա. Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ, ԻՆ-140507, Հնդկաստան «Էզօ 40 էզօմեպրազոլ (էզօմեպրազոլ մագնեզիում) դեղահատեր աղելույժ 40մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 21338 բացասական եզրակացությունը, առ այն, որ լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ նյութերը չեն ներկայացվել, մասնավորապես՝ կայունության հետազոտության տվյալներ, կենսահամարժեքության հետզոտության տվյալներ: Փաստաթղթերը ներկայացված են թերի: Համաձայն ՀՀ

«Դեղերի մասին օրենքի» 16-րդ հոդվածի 16-րդ մասի, 27-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի՝ դեղի գրանցումը մերժվում է:

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հնդկաստանի Ինդ-Սվիֆտ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, Զավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերա Բագի, Ս.Ա.Ա. Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ, ԻՆ-140507 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ինդ-Սվիֆտ ՍՊԸ, ՕՖՖ ՆՀ-21, Զավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերա Բագի, Ս.Ա.Ա. Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ, ԻՆ-140507, Հնդկաստան «Էգո 40 էգոմեպրազոլ (էգոմեպրազոլ մագնեզիում) դեղահատեր աղելույժ 40մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի ընդհանուր հիմունքներով գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

 Recoverable Signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164